ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև գեոդեզիայի, քարտեզագրության և երկրատեղեկատվության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի գործադիր իշխանությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով իրավահավասարության, փոխադարձ հարգանքի և փոխշահավետության սկզբունքների հիման վրա բարիդրացիական հարաբերությունների խորացմանը,

ցանկանալով գեոդեզիայի, քարտեզագրության, ինչպես նաև հարակից գիտությունների և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության համար ստեղծել բարենպաստ պայմաններ,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը պարտավորվում են իրականացնել 1992 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ տարածքային պատկանելության ելակետային գեոդեզիական, քարտեզագրական նյութերի և օդատիեզերահանույթային նյութերի անհատույց փոխանակում (փոխանցում):

Տեղագրական քարտեզների և ռազմական նշանակություն ունեցող այլ տեղագրական նյութերի փոխանակումը (փոխանցումը) կատարվում է միայն Կողմերի պաշտպանության նախարարությունների միջոցով:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի Կողմերի համապատասխան կազմակերպությունների կողմից և կարող է կրել հետևյալ ձևերը.

տեղագրագեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների կատարում,

քարտեզների, ատլասների և տպագրական արտադրանքի այլ տեսակների հրատարակման պոլիգրաֆիական ծառայություններ,

երկրատեղեկատվական համակարգերի, թվային և էլեկտրոնային քարտեզների բանկերի ստեղծման մեթոդաբանության մշակում,

վարչատարածքային բաժանում, աշխարհագրական օբյեկտների անվանումների փոփոխությունների, ճանապարհային ցանցերի զարգացման հետ կապված տեղեկությունների փոխանակում,

այլ գիտատեխնիկական և արտադրական ինֆորմացիայի փոխանակում, փորձարարակոնստրուկտորական աշխատանքների համատեղ կատարում,

տեղագրագեոդեզիական, քարտեզագրական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների միջև աշխատանքի փորձի փոխանակում, գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի մասնագետների ուսուցում և ստաժավորում:

Այսպիսի համագործակցության կոնկրետ նպատակները, խնդիրները և պայմանները կորոշվեն Կողմերի գեոդեզիական և քարտեզագրական ծառայություններ կատարող կազմակերպությունների կողմից՝ համաձայնեցվելով պետական կառավարման համապատասխան մարմինների հետ:

Համագործակցության ծրագրերի իրագործման նպատակով Կողմերը միջոցներ են ձեռնարկում քարտեզագրագեոդեզիական ծառայությունների միջև կնքված պայմանագրերի և Կողմերի՝ գործող ներքին օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտ հումքի, սարքավորումների, հանդերձանքի և պատրաստի արտադրանքի՝ պետական սահմանով հնարավոր պարզեցված տեղափոխման համար:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված ձևերով համագործակցությունն իրականացնելիս, մասնավորապես՝ տեղեկության փոխանակման բնագավառում, Կողմերը, ելնելով գործող ներքին օրենսդրությունից, ինչպես նաև այդ հարցերի վերաբերյալ երկկողմ և բազմակողմ պայմանավորվածությունից, փոխադարձաբար հաշվի կառնեն պետական անվտանգության շահերը:

Հոդված 4

Կողմերը ձեռնպահ կմնան հրատարակվող քարտեզներում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանների դիրքի որևէ փոփոխություն մտցնելուց՝ մինչ այդ հարցով համապատասխան երկկողմանի պայմանագրերի կնքումը:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի իրագործման համատեղ գործունեության համակարգման, ինչպես նաև համագործակցության կոնկրետ պայմանների մշակման և համաձայնեցման նպատակով Կողմերը նշանակում են Կողմերի պաշտոնական ներկայացուցիչների լիազորություններով օժտված փորձագետներ:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված բոլոր հարցերը Կողմերը կլուծեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 7

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին ծանուցման օրվանից:

Սույն Համաձայնագիրի գործողությունը դադարում է դրա գործողությունը դադարեցնելու մասին Կողմերից մեկի ծանուցումը ստանալուց վեց ամիս անց:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո դադարում է Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև գեոդեզիայի, քարտեզագրության և երկրի հեռահար զոնդավորման բնագավառում համագործակցության մասին 1993 թվականի դեկտեմբերի 3-ին ստորագրված Համաձայնագրի գործողությունը:

Կատարված է Երևան քաղաքում 1998 թվականի հոկտեմբերի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման նպատակով օգտագործվում է ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունիսի 7-ից: